ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՋՀ-ԳՀԾՁԲ-22/1 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

ք. Ջերմուկ 24.03.2022թ.

ժամը 16.10

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Աշոտ Խաչատրյան(ԳԱՊ)

Անդամներ՝ Ստեփանոս Վարդանյան(ԳԱ)

Վահե Ղազարյան(ԳԱ)

Վաղինակ Մանուկյան(ԲԱ)

Սաթենիկ Կարապետյան(ԲԱ)

Հանձնաժողովի քարտուղար՝ Սմբատ Պապոյան

ՋՀ-ԳՀԾՁԲ-22/1 ծածկագրով *գնման ընթացակարգի հայտերի բացման և արդյունքների ամփոփման մասին*

1. **Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են armeps.am էլեկտրոնային համակարգի մջոցոցով՝ 24.03.2022թ.,ժամը 12:00-ին, ք.Ջերմուկ,Մյասնիկյան 8 հասցեում:**

1.1 Ընդունել ի գիտություն, որ հայտ էր ներկայացրել հետևյալ մասնակիցը.

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Կապի միջոցը էլ.փոստ, հեռ.համար
1.	«Գրանդ ինսփեքշն» ՍՊԸ	ք.Երևան,Քանաքեռի 13փ.,32/1տ.	grandinspection@mail.ru, 094322432

2. Տվյալներ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների,պատասխանների և հրավերում կատարված փոփոխությունների մասին:

2.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ,պատասխաններ չեն եղել:

3. *Տվյալներ մասնակցի կողմից ներկայացված հայտի,ինչպես նաև փաստաթղթերի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.*

- «Գրանդ ինսփեքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ՝ մասնավորապես.

1) Հավելված 1՝ դիմում հայտարարության մեջ ներկայացված բաց մրցույթը չէր համապատասխանում հայտարարված գնանշման հարցման հրավերի պահանջներին:

2) Ներկայացված չէր հայտում ներառված փաստաթղթերը ստորագրած անձի՝ այդ իրավասությունը ունենալու փաստը, հիմնավորումը:

4. Համաձայն հրավերի 8.9 և ՀՀ կառավարության՝ 04.05.2017թ. 526-Ն որոշման 41-րդ կետերի՝մասնակցին համապատասխան ծանուցմամբ առաջարկվել է մեկ աշխատանքնային օրվա ընթացքում շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները, ինչը սահմանված ժամկետում կատարվել է մասնակիցի կողմից և նրա հայտը գնահատվել է բավարար:

5.Մասնակիցի առաջարկած գները,ըստ չափաբաժինների՝

Հ/Բ	Կազմակերպության անվանումը	Նախահաշվային արժեքը Թվերով (տառերով)	Ինքնարժեք և Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	«Գրանդ ինսփեքշն » ՍՊԸ	550000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ	540000 (հինգ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ	-	540000 (հինգ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ
2	«Գրանդ ինսփեքշն » ՍՊԸ	250000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ	240000 (երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ	-	240000 (երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ

6. Քանի որ մասնակցի ներկայացուցիչը ներկա էր հայտերի բացման և գնահատման նիստին՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի վարվեցին բանակցություններ, գների նվազեցման շուրջ:Բանակցությունների արդյունքում մասնակցի վերոնշյալ գները մնացին անփոփոխ:

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

Հաշվի առնելով վերոնշյալը՝

1.ՋՀ-ԳՀԾՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Գրանդ ինսփեքշն» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

2. ՋՀ-ԳՀԾՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ,4-րդ,5-րդ,6-րդ,7-րդ,8-րդ,9-րդ,10-րդ և 11-րդ չափաբաժինները համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3) կետի՝ հայտարարել չկայացած:

3.Հաստատել՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գնում կատարելու ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և կատարել համապատասխան հրապարակումները:

4. Հաստատել՝ 3-րդ,4-րդ,5-րդ,6-րդ,7-րդ,8-րդ,9-րդ,10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը և կատարել համապատասխան հրապարակումները:

5.«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն անգործության ժամկետ չի սահմանվում:

6. 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում՝ կնքվելիք պայմանագրի տասը տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի տասնհինգ տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. *Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.*

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Աշոտ Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ստեփանոս Վարդանյան

_____ Վահե Ղազարյան

_____ Վաղինակ Մանուկյան

_____ Սաթենիկ Կարապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Սմբատ Պապոյան